ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

24 մայիսի 2023 թ. **թիվ 1/269 Ա**

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2023 թվականի մարտի 31-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել՝

- 10,000,000,000 ՀՀ դրամ ծավալով, 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, արժեկտրոնի տոկոսադրույքը 11,75%, 4 տարի շրջանառության ժամկետով,
- 10,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնի տոկոսադրույքը 6%, 4 տարի շրջանառության ժամկետով,
- 10,000,000 եվրո ծավալով, 100 եվրո անվանական արժեքով, արժեկտրոնի տոկոսադրույքը 4,5%, 4 տարի շրջանառության ժամկետով,

անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև՝ համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2023 թվականի ապրիլի 27-ին և մայիսի 18-ին ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ծրագրային ազդագրի լրացումներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2023 թվականի մայիսի 24-ի թիվ 22 արձանագրություն)՝

Որոշում եմ.

1. Գրանցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 2023 թվականի մարտի 31-ին (ապրիլի 27-ին և մայիսի 18-ին ներկայացված լրացումներով) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի
տեղակալ ***Արմեն Նուրբեկյան***